# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 19 | Դեկտեմբեր | 2018 թ. | Բ | 1056152450 |

| [4] Առաքման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 19 | Դեկտեմբեր | 2018 թ. |

Ճշգրտվող հաշիվ վավերագրի

| Սերիա | Համար |
|---|---|
| | |

Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ

Պայմանագիր

| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ; N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն; N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր: Համար: |
| | Ամսաթիվ: |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ ակցիզ. հարկ | Այդ թվում՝ բնապ. հարկ վճար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 28157618 բ/գ, | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093

(անունը, ազգանունը)

Ստացող

(անունը, ազգանունը)

19/12/2018 16:58:09

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին**

26 հոկտեմբերի 2018թ. ք. Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Ն.Մ.Գարեգինյանս, քննարկելով թիվ 28157618 քրեական գործի նյութերը՝

# Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի սեպտեմբերի 14-ին՝ ժամը 01:10-ին, Արթիկ քաղաքի Թումանյան փողոցի 44-րդ տան բնակիչ Ռազմիկ Գարեգինի Չոփիկյանը ոստիկանության Արթիկի բաժնում հաղորդում է տվել, որ 2018 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 18:30-ից մինչև 23:30-ն ընկած ժամանակահատվածում, բացակայել է տանից, որի ընթացքում հորաքրոջ որդին՝ Արթիկ քաղաքի Կայան փողոցի 9-րդ տան բնակիչ՝ Հովհաննես Արտուշի Հաջաթյանը կոտրել է իր տան պատուհանների ապակիները:

Նշված հաղորդման հիման վրա կատարված դեպքի վայրի զննությամբ պարզվել է, որ 2018 թվականի սեպտեմբերի 13-ի՛ն ժամը 18:30-ից մինչև 23:30-ն ընկած ժամանակահատվածում, Հովհաննես Հաջաթյանը մուտք է գործել Ռազմիկ Չոփիկյանին պատկանող Արթիկ քաղաքի Թումանյան փողոցի 44-րդ հասցեում գտնվող տուն և կոտրել մուքտի դռան կողքի պատուհանի 60x110սմ չափերի մեր շերտ ապակին, դռան վերևի հատվածի պատուհանի 37x47 սմ չափերի 2 հատ մեկ շերտ ապակիները, հյուրասենյակի 4 պատուհանների ընդհանուր 16 հատ 47x70սմ չափերի ապակիները, 2 հատ 47x37 սմ չափերի ապակիները և նկուղի պատուհանի 72x70սմ չափերի մեկ շերտ ապակին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Ռազմիկ Չոփիկյանը բացատրություն է տվել, որ 2018 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, կողպենքով փակել է իր տան մուտքի դուռը և գնացել Արթիկ քաղաքում զբոսնելու: Ժամը 23:30-ի սահմաններում վերադարձել է տուն, տեսել, որ տան պատուհանների ապակիները կոտրված են, իսկ տան նախամուտքի բազմոցին քնած է եղել հորաքրոջ որդին՝ Հովհաննես Հաջաթյանը, ով տան մուտքի դռան կողպեքի օղակը տեղահան է արել մուտք գործել տուն, կոտրել պատուհանների ապակիները: Հովհաննես Հաջաթյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, նա միշտ գնացել է իր տուն, սակայն ինքը թույլ չի տվել որ իր տուն գնա, իսկ 2018 թվականի սեպտեմբերի 13-ին ինքը տեղյակ չի եղել, որ վերջինս գնացել է իր տուն, ինքը նրան թույլ չի տվել, որ մուտք գործի իր տուն:

Հովհաննես Հաջաթյանը բացատրություն է տվել, որ 2018 թվականի սեպտեմբերի 13-ին ժամը 18:00-ի սահմաններում ոգելից խմիչքի ազդեցության տակ գնացել է մորեղբոր որդու՝ Ռազմիկ Չոփիկյանի տուն, քնելու նպատակով, քանի որ վերջինս իրեն հայտնել է, որ եթե ոգելից խմիչքի ազդեցության տակ լինի, կարող է գնալ իր տուն: Այցելության ժամանակ տանը ոչ ոք չի եղել, իսկ տան մուտքի դուռը եղել է բաց վիճակում: Ինքը մուտք է գործել տուն, որի ընթացքում կոտրել է տան մուտքի դռան կողքի և վերևի հատվածի պատուհանների ապակիները, իսկ մյուս պատուհանների ապակիները դրանից առաջ կոտրել է Ռազմիկ Չոփիկյանը: Այդ ժամանակ իր հետ ոչ ոք չի վիճաբանել, իրեն ոչ ոք չի հարվածել, իր մարմնական վնասվածքները ստացել է ապակիները կոտրելու հետևանքով:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 1201 եզրակացության Հովհաննես Հաջաթյանի ստացած մարմնական վնասվածքները՝ ձախ վերնահոնքային, քթի մեջքի, աջ ու ձախ դաստակների շրջանների քերծվածքների ձևով, հասցվել են բութ առարկաների

ներգործության հետևանքով, իսկ աջ դաստակի շրջանի կտրված վերքի և գծային քերծվածքի ձևով, հնարավոր է հասցվել են սուր առարկաների կամ գործիքի ներգործության հետևանքով, հնարավոր է որոշմամբ նշված ժամանակահատվածում ու հանգամանքներում, յուրաքանչյուրն առնվազն մեկ ներգործության արդյունք են և պատճառվել է առողջությանը թեթև վնաս, առողջության կարճատև քայքայումով, նկատի ունենալով վնասվածքների հետ անմիջական պատճառական կապի մեջ եղած հետևանքների տևողությունը ոչ պակաս 6 օրից և ոչ ավելի 21 օրից:

Համաձայն դատապրանքագիտական փորձաքննության թիվ 274-Ապ-18 եզրակացության փորձաքննությանը տրամադրված կոտրված շերտապակիները կոտրվելու հետևանքով սեփականատիրոջը պատճառված նյութական վնասի չափի միջին շուկայական ընդհանուր արժեքը 2018 թվականի սեպտեմբերի 13-ի դրությամբ գնահատվում է 27.670 ՀՀ դրամ:

Կատարված ստուգումներով պարզվել է, որ Հովհաննես Հաջաթյանը 1981 թվականից անցնում է <<Արթիկ բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերության նարկոլոգիական և հոգեբուժական կաբինետի հաշվառումներով՝ <<Օլիգոֆրենիա խորը արտահայտվածություն, դեբիլության, ցնորա-զառանցանքային սինդրոմ>> ախտորոշմամբ:

Դեպքի առթիվ 2018 թվականի սեպտեմբերի 24-ին ոստիկանության Արթիկի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 28157618 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժին, կատարվում է նախաքննություն:

Որպես կասկածյալ հարցաքննված՝ Հովհաննես Արտուշի Հաջաթյանը ցուցմունք է տվել այն մասին, որ սույն թվականի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, ալկոհոլ օգտագործած վիճակով, մենակ գնացել է իր մորեղբոր որդու՝ Ռազմիկ Չոփիկյանի տուն, սակայն տանը մարդ չի եղել, ուստի ինքը բացել է փականի օղակը ու մտնելով տուն ձեռքով հարվածել ու կոտրել է տան պատուհանի ապակիներից մի քանի հատը, որից հետո պառկել բազմոցի ու քնել է:

2018 թվականի հոկտեմբերի 20ին Հովհաննես Արտուշի Հաջաթյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել <<ստորագրությունը չհեռանալու մասին>>:

Նկատի ունենալով, որ քրեական գործով կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզելու համար պահանջվում են դատահոգեբանական և դատահոգեբուժական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ. 244-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 28157618 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:
2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/կասկածյալ՝ Հովհաննես Արտուշի Հաջաթյանը հանրորեն վտանգավոր արարք կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և ե՞րբվանից,

բ/եթե Հովհաննես Արտուշի Հաչաթյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

գ/ Հովհաննես Արտուշի Հաչաթյանը ներկայումս տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/եթե Հովհաննես Արտուշի Հաչաթյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

ե/ Հովհաննես Արտուշի Հաչաթյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

զ/ Հովհաննես Արտուշի Հաչաթյանը հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ, հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը:

3. Եթե փորձաքննության ընթացքում առաջանան հարցեր, որոնք կարող են օգտակար լինեն քննության համար և որոնց պատասխանները մտնում են փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

Թիվ 28157618 քրեական գործի նյութերը փորձագետին կտրամադրվի լրացուցիչ:

**Քննիչ** **Ն.Մ. Գարեգինյան**